Հայցվորի ենթակա է բռնագանձման 100,000.00 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191, 192 և 234.12 հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ թիվ «ՆՄԲԿ-ԲՄԼԱՊՁԲ-24/59-2» ծածկագրով պայմանագրի 22.08.2024թ. միակողմանի լուծումը և 02.09.2024թ. որոշումը՝ գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու վերաբերյալ, անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել 2024թ. հուլիսի 26-ին կնքված թիվ «ՆՄԲԿ-ԲՄԼԱՊՁԲ-24/59-2» ծածկագրով մատակարարման պայմանագրի «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից 2024թ. օգոստոսի 22-ի միակողմանի լուծումը:

Անվավեր ճանաչել «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու վերաբերյալ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության 2024թ. սեպտեմբերի 2-ի թիվ ՆՄԲԿ-ԲՄԼԱՊՁԲ-24/59 որոշումը:

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից հօգուտ «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության բռնագանձել 100,000.00 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

ՀՀ պետական բյուջեից «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերությանը վերադարձնել 50,000.00 ՀՀ դրամ՝ որպես ավել վճարված պետական տուրքի գումար:

Դատական ծախսերի հարցը մնացած մասով համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ **Գրիգորի Վարդանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am